



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

<< >> _____ 2017թ.
N: _____

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐԶ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ հայրենակիցներ

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Հանրապետության տոնի կապակցությամբ:

Այսօրվա անկախ Հայաստանի գոյությամբ մենք նախ և առաջ պարտական ենք 1918թ. Բաշ-Ապարանի, Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Սառնաղբյուրի հերոսամարտերին, ուր կենաց-մահու անզիջում պայքարում հայ ժողովուրդն ապացուցեց իր ազատ ապրելու և անկախությունը պաշտպանելու հաստատակամությունը:

Չնայած իր գոյության կարճատևությանը՝ Հայաստանի Առաջին Հանրապետությունը կարողացավ սերունդներին փոխանցել արժեքային նոր համակարգ, որը հենվում է պետական մտածողության, քաղաքացիական գիտակցության ու ժողովրդավարության սկզբունքների վրա: Հայ ժողովուրդն իր դարավոր պայքարի արդյունքում ստեղծեց նոր, անկախ և ինքնիշխան երկիր, վերականգնեց կորցրած պետականությունը: Այսօրվա սերունդները կրկին ապացուցեցին, որ իրենց նախնիների արժանի ժառանգներն են:

Մեր պարտքն է սրբորեն պահպանել հայրենիքի ազատության ու անկախության համար զոհվածների հիշատակը, արժանի լինել մեր նախնիների հերոսական անվանն ու շենացնել մեր երկիրը:

Շնորհավորելով բոլորիս Հանրապետության տոնի առթիվ՝ մաղթում եմ խաղաղություն, տոկունություն և հավատ՝ մեր հայրենիքի վաղվա պայծառ ապագայի հանդեպ:

Հ. ՄԻՄՈՆՅԱՆ